


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ԱՐԿԱՄԱԽՆԴԻՐ ՈՂԻ**

Այս վերջին մի քանի ամիսներուն աշխարհը լարուած հետաքրքրութեամբ եւ մեծ յուզումով հետեւեցաւ Զօր. Նօպիլի առաջնորդութեամբ «Լիտալիա» օդանաւով դէպ ի Հիւսիսային Բեւեռ կատարուած արշաւանքին, անոր ողբերգական հետեւանքին եւ արկածալի արշաւախումբը փրկելու համար կատարուած հերոսական ջանքերուն: Եօթը կառավարութիւններու կողմանէ 14 նաւեր եւ 19 սաւառակներ Յուլիոս մէկի ազատարար արշաւախումբին մասերը կազմեցին, որոնց միջոցաւ մինչեւ հիմա սնունդաւորներու վրայ լինած արկածեալներէն ութը հոգի ազատուած, երկուքը մեռեալ գտնուած են. իսկ մնացեալ վեց հոգիները տակաւին անյայտ կը մնան խուզարկուներուն:

Այսօր տկանատես կ'ըլլանք չատ մը արկածալի ձեռնարկներու ցամաքին վրայ, օդին մէջ, ջուրին տակ եւ անոր մակերեսին վրայ եւ գիտական աշխատանոցներու գաղտնի տնկիւններուն մէջ: Կրննք իսկ վարկուած են այս արկածալի գրական ոգիէն, կ'ին օգուտներ թոխչքներ կը կատարեն Ատլանտեանի վրայէն, արհամարհելով անոր մահաբեր մշուշներն ու փոթորիկները եւ Ափրիկեան ցամաքամասի վրայէն՝ մէկ ոտուամով Ադրեսանդրիայէն Բէյքի Թաուն հասնելու համար: Ար-

կածալի գիր ոգիով լեցուած այս կորովի անձերէն իւրաքանչիւրը իւր մարդին մէջ կ'աշխատի անկոխ գետիններ նուաճել, նոր հորիզոններ գտնել եւ նոր աշխարհներ գրաւել, անգոսնելով ամէն վտանգ, պատրաստ ընելու գերագոյն գոհողութիւնը, ուրախ եւ զոհ երբ միայն վայելէ յաղթութեան երջանկութիւնը, գերագոյն վարձատրութիւնը իր հերոսական ճիգերուն: Քաղաքակրթութիւնը շատ բան կը պարտի այս անվեհեր հոգիներուն, որոնք միշտ նոր տեսիլքներ կը պարզեն մարդկութեան:

Աշխարհիս վրայ բոլոր մեծ վեհ ձեռնարկները, որոնք մարդկային յառաջդիմութեան սատարած են, արդիւնքն են դիւյալնական հոգիներու արկածալի գործունէություն: Արկածալի գրական մեծագոյն ձեռնարկը բարձրագոյն նկարագրի կազմութիւնն է: Ով կ'ընտոսներու եւ անապատներու փոթորիկները, բեւեռային սառնաշուռն մրրիկները, ձիւնն ու մշուշը, բնական տարրերու առթած պատահական արկածները, մէկ խօսքով ֆիզիքական աշխարհի դժուարութիւններն ու վտանգները կը նսեմանան հոգեւոր աշխարհին մէջ մեր գիմագրաւիլք վտանգներուն քով: աւելի՛ հերոսական պայքար աւելի՛ կորով կը պահանջէ հոգեւոր աշխարհին մէջ նոր նուաճումներ ընել քան թէ նկարագրական մէջ: Այս պատճառաւ չէ՞ որ շատ անգամ կը գտնենք դիւաններ, զինուորներ, խուզարկուներ ու

րոնք բարձր նկարագրի է գուրդին: Բոլոր սուլառնորդները Լինտպէրի չեն:

Կան շատ մը խոհեմ մարդիկ որոնք առաքինութիւն մը կը նկատեն՝ սովորական կեանք մը ապրել քան թէ քրիստոնէական կեանքին բարձրութիւնները մագլցել, պատճառաբանելով որ կեանքի ներկայ պայմանները անկարելի կը դարձնեն բարձր կեանք մը ապրելը, և թէ բոլոր փորձերը անպայման պիտի վերջանան ողբերգական անկումով, ուստի աւելի լաւ է չփորձել քան թէ Քրիստոնէութիւն կեղծել: Այս խոհեմները կ'ուզեն այնպիսի աշխարհի մը մէջ ապրել ուր իրենց սուլառնութիւններուն մէջ չպիտի փոթորիկներու հանդիպին, մշուշները չպիտի ձեղքեն, արկածալի անկումներու պատահականութենէն միշտ զերծ պիտի մնան, և ուր կեանքը հեղասահ ընթացք մը պիտի ունենայ. ասոնք կ'ուզեն ձրիօրէն խլիլ քրիստոնէական կեանքի դափնեպսակը: Եթէ բոլոր մարդիկ այնպէս խորհէին ւնարկային կեանք չպիտի գոյութիւն ունենար, քանզի դժուարութիւններէ, վատանքներէ վախճող այս մարդերը պիտի վատանքն իրենց գերագոյն դանձը, իրենց մարդկութիւնը, իրենց քրիստոնէական նկարագրերը:

Մեծագոյն արկածախնդրական ձեռնարկը կատարուեցաւ Յիսուսի կողմանէ, որ իր արեւան գինով նոր աշխարհներու վեհագոյն տեսիլքը պարզեց կորովագուրդի մարդկութեան:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԵՈՒԹԻՒՆ

և

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Կ. Պոլսոյ «Հայ Խօսնակ» կրօնական թերթը Գեր. Տ. Ղեւոնդ Եպիս. Դուրեանի, Մանչէսթըրի Հայոց հովիւին, «Պարզ Քարոզներ» ու չորրորդ հատորէն քաղելով արտատպումներ կ'ընէ վերոյիշեալ խորագրով անոր մէկ քարոզէն, որմէ քաղելով կը հրատարակենք հետագայ հատուածը: Գեր. հեղինակը Հայ Առաք. եկեղեցին կը ներկայացնէր Լօզանի միջազգային կրօնական ժողովին մէջ: Ծ. Խմբ.

... Քրիստոնէայ եկեղեցիները երկար ժամանակ սխալ միջոցներ ի գործ դրած են

քրիստ. միութեան ... հետապնդած են երեւակայական միութիւն մը, միակերպութիւն մը, բնութիւն ի գործ դրած են մարդկային բնութեան վրայ, հոգիին ամենէն խորունկ պահանջներուն վրայ. անոնք ճնշած, արհամարհած են այն նուիրական բանը որ խիզ կը կոչուի: Վարդապետական արարողական կալուածին մէջ անկարելի է կատարեալ համաձայնութիւն, միութիւն. զի ծէսերը, ձևերը կախեալ են ժամանակներէ, միջավայրէ, երկրէ, կլիմայէ, սովորութիւններէ, դաստիարակութենէ, նոյնիսկ քաղաքակրթութենէ. և միթէ կարելի է պահանջել որ ձեւերը միութիւն պահեն: Նոյնը կրնանք ըսել նաև Արարածաբանական վարդապետութեանց և իմաստասիրական տեսութեանց համար:

... Ոչ ոք իրաւունք ունի ըսելու՝ «Իմ դաւանանքէս դուրս չկայ փրկութիւն, իմ դաւանանքս ճշմարիտ է». յաւակնութիւն պիտի ըլլար իմացականութեան արդիւնք եղող իմաստասիրութեան, աստուծաբանութեան ձեւերը կատարեալ և անայլալ ներկայացնել: Մարդոց վարդապետ հետ առնչութիւն ունեցող այդ բանաձևերը կը փոխուին: Այդ բանաձևերը բարեբախտաբար Քրիստոսի և Աւետարանի կրօնքը չեն կազմեր: Բոլոր այդ ծէսերը և վարդապետութիւնները պահարանի, կեղեւի դերն է որ կը կատարեն կրօնի մէջ. անոնք կորնչական են. աւելի խո՛րը պէտք է իրթալ, գտնելու համար հոգիներու հազորգալիցութեան գետինը: Յիսուս արարողական գործի հետ հետաքրքրութիւն չունեցաւ. ան չկազմեց կամ խմբագրել չտուաւ ունէ դաւանութիւն. անիկա ո՛չ քահանայ և ոչ զպր էր: Գիտէ՞ք ուր է հաստատուն և իրական միութեան գետինը. չարէն պժգալու և բարին սիրելու մէջ է: Յիսուսէ յանձնարարեալ առաքինութեանց գործադրութեան մէջ է, քաղցրութեան, խոնարհութեան, ողորմութեան, ներումի մէջ է, զԱստուած սիրելուն և իր ընկերը սիրելուն մէջ է, վերջապէս հաւատալու, յուսալու և սիրելու մէջ է:

Միայն քրիստոնէական կեանքի կալուածին վրայ կարելի է իրականացած տեսնել միութիւնը: Այդպիսի միութիւն մը ուրիշ ամէն ատենէ աւելի պէտք է հիմայ ըլլայ: Կը հասկնամ և կը յարգեմ զանազանութիւնները, զիտեմ որ անոնք անխուսափելի հետե-

ւանքներն են մեր բնութեան, ազատ քննադատութեան:

Ինչ որ կը մտադրեմ և կը խնդրեմ հոգւովըս, Եկեղեցի մըն է ոչ թէ անձուկ և փակալ, այլ բաց, այլ ընդարձակ Եկեղեցի մը ուր փնտուռի, ուր իշխէ ոչ թէ միակերպութիւն վարդապետական և ծիսական, այլ միութիւն սրտերու, սիրոյ և առաքելութեանց Աւետարանի: Ինծի պէս դուք ալ կը փափաքիք մերձեցումը բոլոր սրտերու, բոլոր Եկեղեցեաց: Այսպիսի ըղձանք մը միթէ երա՞զ պիտի նկատուէր. — Ո՛ր: Եկեղեցեաց միութիւնը կրնայ իրականանալ ոչ թէ ձէսերու, դաւանանքներու միաձեւութեամբ, այլ խղճի ազատութեամբ, այլ փոխադարձ օգնութեամբ, միմեանց յարգանքով, խոնարհութեամբ և զթուլութեամբ, և անոնք պիտի ըլլան մի միայն միջոցները և ատաղձները, կազմելու, շինելու համար Տիեզերական, Կաթողիկէ Եկեղեցին:

Երախտագիտութեամբ հարկ է արձանագրել որ Հայ Առաքելական Եկեղեցին այդ պայմաններով է կառուցուած: Հայ Եկեղեցին զոյութիւնը երբեք դաւանանքներու չէ կապուած, ան ազատ կ'ուզէ շարժիլ դաւանաբանական խնդրոյ մէջ: Հայ Եկեղեցական մատենագրութեան մէջ շատ անգամ կը հանդիպինք դաւանաբանական ազատ արտայայտութեանց: Հայ Եկեղեցին թէ՛ Քաղկեդոնական է և թէ՛ ոչ, վասն զի իբր կենսական բան մը իր զոյութիւնը Քաղկեդոնական դաւանութեան չի կապեր: Այս օրերուն շատ կ'աշխատուի ապացուցանել թէ մեր նախնիք Քաղկեդոնական դաւանութիւնը ընդունած էին: Սխալ ձեռնարկ մըն է զայս ապացուցանելու ջանքը. վասն զի Հայ Եկեղեցին միշտ ազատ եղած է երկրայական հարցերու մէջ, «Ազատութիւն յերկրայական»։ վարդապետական խնդրոյ մէջ ազատ ուզած է մնալ: Հայ Եկեղեցին ըսած է և կ'ըսէ իր հաւատացելոյ. «Քաղկեդոնական ժողովի դաւանութիւնը ընդունինք ալ, չընդունինք ալ, նոյնն է, կարեւորը Քրիստոսն է, Աւետարանն է»: Հայ Եկեղեցին կը նախասիրէ միութիւն՝ դաւանաբանական զանազանութեանց մէջ. Հայ Եկեղեցւոյ բիմերը չեն սպառնար կրօնական ազատութեան դէմ: Ամենէն ազատ բիմը Հայ Եկեղեցին է որ չի խօսիր դաւանաբանական նիւթերու վրայ, այլ միայն Աւետարա-

նի բարոյականն է որ կը բացատրէ: Այս իսկ ցոյց չի տար թէ ան կը նախասիրէ բարոյական և հոգեկան գետնի վրայ միութիւն, քան աստուածաբանական կամ դաւանաբանական գետնի վրայ: Ուրախալի է որ Եկեղեցեաց միութեան անհրաժեշտութիւնը ըմբռնելով, Հայ Առաքելական և Հայ Բողոքական Եկեղեցեաց մէջ աւելի սերտ միութիւն մը սկսած է պաշտամունքի մէջ, ինչպէս ցայժմ կար միութիւն բարոյական համագործակցութեամբ ազգային գործոց մէջ: Ամէնքս միևնոյն երկնաւոր Հայրն է որ կը պաշտենք, միևնոյն Փրկիչն է որ կը ճանչնանք իբր յայտնիչը աստուածային սիրոյն և մարդկային եղբայրութեան: Ամէնքս ալ ունինք նոյն գաղափարականը՝ որ է երկնաւոր Հայրը և մարդկութեան Փրկիչը: Եթէ կայ զանազանութիւն ըմբռնումներու մէջ՝ նպատակը նոյնն է, եթէ կը տարբերին ձեւերը և միջոցները, հոգին նոյնն է: Ուրեմն ձեռք ձեռքի մէջ և սիրտ սիրտի հետ, որպէս զի աշխարհ վկայէ, ինչպէս առաջին քրիստոնեաներու համար կ'ըսէին. «Տեսէք ի՞նչպէս կը սիրեն մէկմէկ», և այն ատեն է միայն որ ապացուցած պիտի ըլլանք թէ Տիրոջ աշակերտներն ենք. «Յայսմ զիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտ էք, եթէ սիրիցէք զմիմեանս:»

ՆԱԶՈՎՐԵՑԻՆ Կ'ԱՆՑՆԻ

(Կարդա՛ Դուկ. 18. 37)

Ճամբուն եղիւք նստող կոյր մուրացիկը երբ ամբոխի մը մերձեցաւ հասկցաւ, ուզեց գիտնալ թէ ո՞վ էր այս ճամբէն անցնողը: Եւ իբր իրեն պատասխանուեցաւ թէ Նազովրեցի Յիսուսն է ան, անմիջապէս մեծ վարդապետին և Բժիշկին դիմեց որ իր աչքերը բուժէ:

Տելփոսի տաճարին պատը զարդարող արձանագրութիւններէն մէկը այսպէս կ'ըսէ. «Դիտցի՛ր՝ քու պատեհութիւնը»: Ճամբուն եղիւք նստող մուրացիկանին համար Յիսուսի անցնիլը իր կիանքին գերազոյն պատեհութիւնը կը կազմէր, որմէ օգտուելով կոյրը ըստոցաւ իր տեսողութիւնը: Յիսուսի անցնիլը այս երկրային ճամբէն մարդկային պատմութեան է՛ն կարեւոր դէպքերէն մէկը կը կազմէ: Յիսուսի անցնելուն պատմութեան վրայ ունեցած ազդեցութիւնը մեծագոյն խորհողներուն և խոնարհագոյն անձեռն ուշադ-

րութիւնը զրուած է: Նկարիչները, քանդակագործները, բանաստեղծները, պատմագիրները, պետական մարդերը, գիտնականները, վարիչները եւ մարզարէները ջանացեր են պարզել գրեթէ անըմբռնելի իմաստը այս բառին. «Նազովրեցին կ'անցնի»:

Պատմութեան ուսանողը գիտէ թէ իւրաքանչիւր մեծ դարին առանձքը կը կազմէ տիրանեան հանճար մը, որ մարդկային միտքին տեսիլքներ եւ անոր գործունէութեան ուղղութիւն կ'ուտայ:

Աղեքսանդր անցաւ: Իր հանճարին մեծութեամբը եւ գէնքերուն զօրութեամբը դարբնեց Արեւելքի հին հարստութիւններէն մէկը: Բայց ասուպային կեանք մը ունեցաւ, եւ իր մահուան վաղորդայնին իր կայսրութիւնը բաժան բաժան եղաւ:

Յուլիոս Կեսար, մեծագոյն հռովմայեցին, նոյնպէս անցաւ մարդկային գործողութեան բեմէն: Իր զարմանալի եւ բազմազան ձիրքերովն ու կարողութիւններովը Արեւելեան աշխարհը անքակտելի պահեց: Իր բանականները թէ՛ հայրենիքը եւ թէ՛ դուրսը անպարտելի մնացին, կայսրութեան արծիւները եւրոպայի վրայ սաւառնեցան գերիշխանօրէն: Բայց մարդասպանի դանակը կարճեցուց իր փայլուն ընթացքը, եւ Հռովմէական կայսրութեան լաւագոյն օրերուն վերջ մը տուաւ:

Վեհ ու գեղեցիկն Օգոստոս՝ նաեւ կ'անցնի իր ճամբէն, զրոշմելով իր զօրեղ նկարագիրը ժամանակակից կեանքին վրայ, աղիւսաշէն Հռովմը ձգելով մարմարաշէն: Բայց իր վերջին շունչը հաղիւ փչած, անկործանելին Հռովմ անկումի նշաններ ցոյց կուտայ:

Ահա կ'անցնին իրարու հոռէն Մեծն Կառլոս միջնադարեան աշխարհի մեծ տէրութիւնները իրարու զօգելով, Ուիլիւմ՝ Նորմանտացի յաղթականը՝ բաժանեալ Անգլիան միաձոյլ ազգի վերածելով. եւ ահա կ'անցնի Նարոլէոն, Բորալքացի եզական հանճարը, բայց անոր ասուպային թռիչքին վը վկայէ պորփրեւէ դամբան մը միայն, որուն մէջ «Երկաթեայ քունը» կը քնանայ, Փարիզի մէջ Լէզ Էնվալիտի ոսկեզօծ գմբէթին տակ: Այս շրջանները կը կոչենք «Աղեքսանդրեան», «Օգոստոսեան», «Նորմանտական» եւ «Նարոլէոնեան», քանզի այս մեծ վարպետներն էին որ կերտեցին ինչ որ անոնք են:

Նոյնը ճիշդ է գեղարուեստի համար: Ահա կ'անցնի Բաֆայէլ մը, Տալինչի մը, Անժելօ մը եւ նոր դպրոց մը կամ դար մը կը բացուի: Հայտնի, Պէթովէն, Պախ, Ուակնէր եւ երաժշտութեան ուրիշ շատ մը վարպետներ կ'անցնին իրենց որոշ ուղեգիծներէն: անոնք՝ միջոցին մէջ թրթռացող երաժշտութիւնը կ'առնեն եւ զանոնք կը թարգմանին հասարակ ախանջներուն:

Բոլոր այս մարդերը գործողութեան ուղղութիւն տուած, զաղափարները ձեւած եւ միտքը ներշնչած են. իւրաքանչիւրը վարպետ չինող մը եղած է:

Յիսուս իրեն անհամակիր աշխարհ մը եկաւ: Տառապանքին ծանօթացած այդ վըշտակիր մարդը անարդուեցաւ եւ մերժուեցաւ: Աշխարհի անծանօթ մէկ անկիւնը մարդկային ծառայութեան հասարակ ճամբէն քալեց անցաւ: Մի քանի գիւղացիներ լսեցին զԱյն, Անոր անձնաւորութեան հմայքէն ազդուեցան եւ Անոր անզուգական պատգամէն գերուեցան: Տեղ տեղ մարդերու պզտիկ խումբեր Անոր մէջ գտան մէկը, որուն պէս ոչ մէկ մարդ երբէք չէր խօսած: Դպիրները եւ եկեղեցին զԱյն նկատեցին իբր մէկը որ առանց իրաւասութեան նորութիւններ կը ներմուծէր, հետեւաբար չհամակրեցան Անոր: Իւր գիւղին բնակիչները նոյնիսկ ծաղրեցին եւ վարկէ զուրկ նկատեցին զԱյն: Բայց Իւր կեանքին միայն երեք տարիները անցուց մարդկային գործողութեան ընդարձակ բեմին վրայ, իր մեծ ծառայութիւններուն եւ մեծագոյն պատգամներուն շատը անհատներուն մատուցանելով:

Բեթանիայի համեստ տնակին մէջ երկու վշտահար կիներուն խօսուեցան այն բառերը՝ որոնք անմահութեան համար մարդկային յոյսին հիմը կը կազմեն: Սուքարի ջրհորին քով միայնակ եւ պարզ կնոջ մը մարդկային սրտին է՛ն արիւրի խօսքերը կը խօսուին: Գլխիւրային մենութեան մէջ ուսումնական եւ պետական մարդու մը կը խօսուին այնպիսի խօսքեր՝ որոնք վերաստեղծեալներքին կեանքի մը պէտքը կը շեշտեն: Բոլոր իր այս ծառայութիւններուն եւ պատգամներուն փոխարէն շատ քիչ համակրանք եւ յաճախատելութիւն չահեցաւ: Լերան վրայ մեծ Բարոզով մը Իւր թագաւորութեան նպատակը կը պարզէ,

և մարդկային միտքին և գործունէութեան համար գաղափարականներ կ'առաջադրէ:

Այս կեանքին պատմութիւնը՝ աշխարհի ունեցած ամենակարճ ժամանակագրութիւններէն մէկուն մէջ ամփոփուած է: Այս երամակայ ծառայութիւնը, որ աշխարհի լաւագոյն խորհողներու կողմանէ անբաղդատելի և աննման նկատուած է, ամօթալի պարտութեամբ մը վախճանիլ թուեցաւ: Զայն սըխալ հասկցող գեղջուկ աշակերտներու խումբի մը թողուեցաւ աշխարհը յիշաշրջող Անոր վարդապետութիւնները տարածելու պաշտօնը: Մարդկային պափութեան մէջ և ոչ մէկ կեանք ծառայութեան այսպիսի ուղի մը գրծած է: «Նազովրեցի Յիսուսի Անցնիլը» ներշնչարանը եղած է աշխարհիս լաւագոյն միտքին, ազնուագոյն գեղարուեստին, վսեմագոյն գրականութեան և բարձրագոյն մշակոյթի, և տասնեւինը դարերէ ի վեր եղած է անոր գերագոյն յոյսը:

Եթէ Երիքովի ճամբէն Նազովրեցիին անցնիլը կոյրին լոյս պարզեց, Անոր անցնիլը բոլոր մարդկութեան լուսափայլ տեսիլք մը և անսահման հայեացք մը տուած է...: Նազովրեցիին մէջ մեր է՛ն խորունկ հետաքրքրութիւնը կը կայանայ այն գիտակցութեան մէջ՝ թէ Ան երբէք չէ դադրած անցնելէ և թէ կրնանք Անոր քայլերուն հետքերը գտնել դարերու մէջէն երկարող մարդկային յառաջդիմութեան ճամբուն վրայ: Բրիտտոնեական քաղաքակրթութիւնը ուրիշ բան չէ ա՛յլ մարդկային մտքի և գործունէութեան մէջ Յիսուս Բրիտտոնի իշխող ոյժին և գերակայութեան արտայայտութիւնը: Երբ մարդիկ զԱյն խաչեցին խորհեցան թէ Անոր անցնիլը ա՛յլ վերջացած է...: Բայց բոլոր երկիրները Յունաստան, Իտալիա, ապա բոլոր Եւրոպան, ու միւս ցամաքները Անոր անցնելուն հետքերը կը կրեն, որոնք կը մատնանշեն կատարուած յիշաշրջումներուն, գաղափարի փոփոխութիւններուն, նոր և հիւանալի ձեռնարկներուն... և ներկայիս Ան կ'անցնի, Ան կը քալէ երկրիս վրայ, անզգալի մարդկային լսողութեան և տեսողութեան, ազգելով մարդկային մտքին և ընթացքին վրայ, և յառաջ բերելով այն բոլոր փոփոխութիւնները որոնք վերջապէս մարդը պիտի բարձրացնեն եսասիրութեան և կիրքերու յաճ մակարդա-

կէն աստուածային խորհողութեան և գործողութեան բարձր ոլորտներուն: ... Հիշու եղող Տէրոջ մը մասին չէ որ կը խօսինք մենք, ներգոյ և մշտագոյ Տէրն է որ մեր խորհուրդին և յարգանքին առարկայ է:

ԵՊՄ. Ճ. Ի. Ֆրիմէն

ԻՆՔՆԱՄՓՈՓՈՒՄԻ ՊԱՆԵՐ

Տիեզերական գրականութեան գոհարները, գիտութեան և արուեստի գարմանահրաշ գիւտերը, վսեմ գաղափարներն ու խօսքերը՝ որոնք դարէ դար կը մնան՝ արդիւնքն են առանձնութեան մէջ երկար խոկուններու:

Բաֆայէլի մը անշուշտ աշխատանոցէն վերջապէս լոյս կուգայ արուեստի գործ մը՝ որուն առջև աշխարհ խանդավառ հիացումով կը կենայ:

Բանաստեղծը երկար կը խորհի լուծեան մէջ և մարդկութեան կուտայ իր անմահ երգը, որ դարեր շարունակ կը թրթռայ մարդոց շրթներուն և սրտերուն լարերուն վրայ:

Հնարիչը իր յօնքերը կը պուտէ, մտամոփոփ կերպով և ջերմ հետաքրքրութեամբ շատ մը խաղաղ գիշերները կ'անցնէ նախօրինակներու վրայ ծռած և երեան կը հանէ իր կատարելագործուած մեքենան, որ բարիք մը կ'ըլլայ տառապող մարդկութեան:

Բանախօսը կը գոցէ դուռը և իր անանձնարանին մէջ կը յղանայ վեհ խորհուրդներ, կը գրէ մեծ նախագասութիւններ. և կը յղկէ մեծախորհուրդ պարբերութիւններ. և երբ երեւան կ'իլլէ՝ հազարաւորներ կ'ազդուին և կը յուզուին իր հրապառ պերճախօսութենէն, ու բռնաբարութիւնը, ճնշումը և թշնամանքը կ'անյայտանան:

Բրիտտոնեան երկար ատեն թաղուած կը մնայ աղօթքի և մտածմունքի վսեմ լուծեան մէջ: Եւ ան կը վերերենայ դէմքը փայլուն, ձայնը խանդավառուած երկնային ներշնչումով և իր բազուկները զօրացած արիական գործեր կատարելու իր Տէրոջ համար:

Թարգ. Պ. Լ.

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՄԱՌՈՑ ՄԷԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Դամասկոս՝ Հայկական ծանօթ տարագրութիւնէն առաջ չէ ունեցած Հայ Աւետ. ժողովուրդ: 1916ին բաւական հայ տարա-

գիրներ կը հաստատուին Դամասկոս: Այս թուականին՝ Սալիպա Խուտէտա անունով երիտասարդ մը կ'սկսի հոգեւոր պաշտամունքներ կատարել: Այս անձնուէր եղբայրը, թէ՛ և ազգով Ասորի, ինքզինքը նոյնացուցած է մեզ հայերու հետ: Արդարեւ, ան իր անձնազոհ ծառայութիւններուն համար ամէն գնահատանքի արժանի է: Դամասկոսի եկեղեցին (որուն հիմա սարկաւազն է ինքը) նիւթական և հոգեւոր տեսակէտով շատ բան կը պարտի իրեն:

Հոգեւոր պաշտամունքները կը շարունակուին մինչև 1918, Յունիսի վերջերը: Նոյն տարին՝ յառաջացող Անգլիական բանակին հետ հայերը կը դառնան Կիլիկիա:

1921ին Կիլիկիոյ պարպումին պատճառաւ Նոյնմերի վերջերը՝ նորէն բաւական թիւով հայեր կուգան կը հաստատուին Դամասկոս: Իրլանտայի Երիցական Աւետ. ընկերութեան միսիօնար Վեր. Մէք Փարլանտէն արտօնութիւն կ'ստանան եկեղեցիի շէնքին մէջ պաշտամունքներ կատարելու համար: Ու նորէն Սալիպա եղբոր միջոցաւ հոգեւոր գործը կը սկսի:

1922ին Ժողովուրդը կուենեայ իր ուրոյն դպրոցը, թէ՛ մանչերու և թէ՛ աղջիկներու համար: Եւ քանի որ Ժողովուրդը նիւթապէս ի վիճակի չէր դպրոցը շարունակելու, Մր. Մէք Փարլանտը մանչերուն, իսկ Անգլիացի միսիօնարուհի Օր. Ճանսթըն աղջիկներուն կ'օժանդակեն, տրամադրելով աշակերտութեան համար սենեակ, ու ապահովելով ուսուցիչներուն ամսաթոշակը: Որքա՛ն երախտապարտ ենք այս բարեսէր օտար բարեկամներուն:

Սալիպա եղբայրը մինչև Օգոստոս, այսինքն ինը ամիս ձրի կը քարոզէ: Միայն չնչին նուէր մը կը տրուի իրեն, ի վարձադրութիւն իր անխոնջ ջանքերուն:

1922 Օգոստոսին՝ Դամասկոսի Հայ Աւետարանականները կ'ունենան իրենց պաշտօնական քարոզիչը յանձին Վեր. Կ. Հասէսեանի: Վեր. Հասէսեանի ժամանակ եկեղեցին առաջին կազմակերպեալ վիճակը կ'ստանայ: Յիշեալը՝ իր օգտակար ծառայութիւններով Ժողովուրդը կը սիրաշահի:

1923 Հոկտ. 30ին Վեր. Կ. Հասէսեանին կը յաջորդէ այս տողերը գրողը: Այն ատեն

ները Աւետարանականութեան թիւը կը հասնէր 1100ի: 1925 Հոկտ. 18ի տխուր դէպքին առթիւ, Ժողովուրդին կէսէն աւելին կը փոխադրուի Պէյրութ և այլուր: Հիմայ կը զրտնուին շուրջ 450 աւետարանական հայեր, զրեթէ ամենքն ալ աղքատ դասակարգէն:

Դամասկոսի հայութեան նիւթական, կրթական և բարոյական անհրաժեշտ պէտքերու մասին յաճախ տեղեկութիւն տրուած է նամակներու և թերթերու միջոցաւ: Այս առթիւ անգամ մըն ալ շեշտենք թէ, Դամասկոսի Հայ գաղթականները ամեն աջակցութեան և համակրանքի կարօտ են: Անոնք նիւթական և բարոյական յուսահատեցուցիչ պայմաններու տակ կը քաշկռտն իրենց կիսնքը: Սակայն ո՞վ կը լսէ: Հակառակ անոր որ Դամասկոսը կարեւոր գաղթավայր մըն է, տխուր իրողութիւնը սա է թէ, ոչ տար բարեախրական ընկերութիւններ, և ոչ ալ մեր ազգային կամ եկեղեցական իշխանութիւններ այնքան չեն հետաքրքրուիր անոնցմով, որքան կը հետաքրքրուին անոնք, մանաւանդ Հայէպի և Պէյրութի գաղթականաց վիճակով:

1924էն իվեր մինք կը պահենք Բարձրագոյն Երկսեռ Վարժարան մը, 160-180 աշակերտութիւնով: Նկատի ունենալով մեր ազգային վարժարաններու կրօնական ոյժմու անբաղձալի վիճակը, մեր դպրոցը գոյութիւն ունեցած է լոկ աշակերտութեան աւետարանական սկզբունքներու վրայ տոհմային կրթութիւն տալու նախանձաւորութեամբ: Եւրանի թէ մեր այս նպատակը հասկցուէր:

Հոս յարգելի ընթերցողներուն ուշադրութեան կը ներկայացնեմ խիստ կարեւոր խնդիր մը: Ինչպէս վերը յիշեցինք, մենք չունինք մեզի պատկանող ո՛չ եկեղեցի, և ո՛չ ալ զրպրոցի շէնք: Այս վիճակը բնականաբար կը դժուարեցնէ մեր կրթական և հոգեւոր դարձերը: Ուստի մենք ստիպուած ենք միծ չէնք մը վարձել տարեկան 60-70 Օսմ. ոսկիով: Սակայն այս ծանր պայմաններու տակ զործը շարունակել անկարելի է: Հետեւաբար, այս լուծէն ազատելու համար, Ժողովուրդը իրեն սեփական շէնքի մը տիրանալու գնահատելի գաղափարը յղացաւ: Եւ առ այդ կազմուեցաւ Փօնտի Յանձնախումբ մը: Կառուցուելիք շէնքին համար Ժողովուրդը իր օրապահի-

կէն կտրելով խոտացաւ տալ 100 Օսմ. ոսկիէն աւելի գումար մը: Սակայն այս միայն կը պո-
ցընէ ազքատ ժողովուրդի մը հոանդն ու կեն-
սունակութիւնը: Այս անհրաժեշտ պետքին
գոհացման համար անշուշտ կարօտ ենք բարե-
սէր բարեկամներու աջակցութեան: Մեր
սկզբունքներուն իրականացման նախանձա-
խնդիր ո՞վ յարգելի հայրենակիցներ, չճշ-
ուպեր մեր գործին շարունակութեան սատա-
րել, Ձեր թանկագին օժանդակութեամբ:

Դանսախոյ

ՆԵՐՍԷՍ Ս. ՍԱՐԵԱՆ



ՎԵՐ. Ն. Ս. ՍԱՐԵԱՆ

Ինքնակենսագրական Գիծեր. — Ծնողքիս խոս-
քին համեմատ ծնած եմ 1886 ին ձմեռը, Ներսէս
Շնորհալիի կաթողիկոսարան՝ Հռոմկլայի ձիւղին
գիւղին մէջ: Տասնութեկ տարեկանին մտայ գիւ-
ղին դպրոցը, ու 15 տարեկանին աւարտեցի անոր
դասընթացքը: 1901 Նոյ. ի սկիզբն էր, հօրս հետ
համբայ ելանք դէպ ի Տարսոն, Գուէճ մտնելու հա-
մար. քաղցինք շուրջ 70 ժամ և տասը օր վերջ
հոն հասնելով հեռեկալ օրը մտայ դպրոց: 1911ին
Տարսոնէն շրջանաւարտ եղայ, եւ նոյն տարին գա-
ցի Մարաշի Աստուածաբանական վարժարանը, որ-
մէ 1914 ին շրջանաւարտ եղայ: Հասանդէյլիի Ե-
կեղեցիէն հրաւէր ստացած ըլլալով, Սեպտ. 16 ին
նորակազմ ընտանիքովս հաստատուեցանք հոն:
Տարագրութեան միջոցին ծնողքս մեկմէ զատ ԲԵԶ-
ուեցան Արաբիոյ խորերը (Մաան) ալ չի վեր: զառ-
նալու, իսկ ես նախախնամութեան մէկ զարմա-

նալի կարգադրութեամբ ընտանիքս փոխադրեցի
Բիւլիս, ուր կը գտնուէր անհրա: Պատերազմի գրե-
թէ ամբողջ ընթացքին հոն մնացինք, թէ և ես շատ
անգամ կը հալածուէի թուրքերու կողմէ: Ձինա-
զագարէն վերջ, 1919 ին, նորէն Հասանդէյլիէն հրա-
ւէր ստանալով Մայիսին գացինք հոն: 1920 ին
Յուլիս 4 ին Հասանդէյլին ձգեցինք, ու կռուելով
եկանք Տէօրի կողմ, ուր մնացինք ռաբլ տմիս: Վեր-
ջը, Ազիքստարէթի եկեղեցիին համար հրաւէր ըս-
տացանք, ու 1921 Ապրիլ 1 ին փոխադրուեցանք
հոն: Ստացուած հրաւէրի մը վրայ 1923 Հոկտ. 30
ին Դամասկոս եկանք, ուր 1924 Նոյ. 16 ին կատար-
ուեցաւ իմ ձեռնադրութիւնս: 1925 Հոկտ. 18 ին
ճապած ապստամբական շարժումին միջոցին Տէրը
իւր անհուն ուղորմութեամբ մահուան չի մատնեց
մեզ: Սակայն ի՞նչու: Այս հարցումը առաջնորդեց
գիւս նուիրումի սկզբին, անարժանաբար անգամ
միջի ալ դնելու իմ անձս անոր վրայ, զոհուելու իր
փառքին համար:

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ՊԷՅՐՈՒԹ

Շուրջ հինգ տարիներէ ի վեր Պէյրութի
մէջ գոյութիւն ունի Հայ Ե. Բ. Ը. և շատ
օգտակար ու գնահատելի գործ մը կը կատարէ
քէմիի հայ երիտասարդութեան մէջ: Ունի իր
ճոխ գրադարանը և ընթերցասրահը՝ ուր կան
տեղական, Պոլսական, Ամերիկեան եւայլն.
օրաթերթեր, շաբաթաթերթեր և պարբերա-
թերթեր, և ուր երիտասարդներ կ'այցելեն
լրենց պարապոյ ժամերը օգտագործելու հա-
մար: Ֆուտբոլի և պէսքէթպոլի նման խա-
ղեր մասնաւոր հմայք մը ունին պատանինե-
րու հաճար, որոնք այս կերպով հեռու կը
մնան այն շատ մը վատասեռիչ ազդեցութիւն-
ներէն՝ որոնց ամէն ժամ ենթակայ են քէմբե-
րու մէջ:

Ընկերակցութիւնը ունի նաեւ իր շարա-
թական լսարանը, ուր հայութիւնը, մանա-
ւանդ երիտասարդութիւնը շահազրգռող
առողջապահական, գիտական և քաղաքական
խնդիրներու շուրջ բանախօսութիւններ և
դասախօսութիւններ տեղի կ'ունենան:

Անցեալ տարուայ կարեւոր գործերէն մէկը
եղաւ պգիտիկ խումբերով կատարուած կրօնա-
կան դասախօսութիւնը, որուն շատ կարեւո-
րութիւն կ'ընծայէ Ընկերակցութիւնը, վստահ

ըլլալով թէ անիկա ապագայի խոստումնալից, եւ օգտակար գործերէն մէկը պիտի ըլլայ: Ասկէ զատ Ընկերակցութիւնը սահմանափակ չափով մը ոյժ տուած եւ օգնած է ուրիշ օգտաշատ ձեռնարկներու ալ՝ մարմնամարզական կրթական եւ կրօնական մարզերուն մէջ:

Յառաջիկայ տարուան առաջադրուած գործունէութեան մաս կը կազմեն գիշերային դասընթացքներ, անգործներու գործ գտնելու յոյժ ստիպողական գրասենեակը եւ սեռային դաստիարակութեան շուրջ Միացեալ Նահանգաց առողջապահական ընկերութեանց կողմէ պատրաստուած մատենաշարէն, գոնէ մէկ կամ երկու հատիկ հայերէնի վերածումը:

Այս համառօտ տեղեկատուութենէն կը տեսնուի թէ այս ձեռնարկը լուրջ, ազգասիրական եւ եղբայրսիրական գործ մըն է: Ան, քաղաքական նպատակներ չի հետապնդեր, ուստի ոչ-կուսակցական է: Դաւանական մաս ալ չունի եւ ուստի ոչ-յարանուանական է, բայց եւ այնպէս քրիստոնէական է ոգիով, ծրագրով եւ նպատակով:

Մեծ պատերազմէն յետոյ հայ ազգը հետոսական ջանքեր ըրաւ շինարարական, կազմակերպական, բարեգործական եւ մասամբ ալ կրթական մարզին մէջ: Բայց հայ երիտասարդութեան նկարագիրը ամուր հիմերու վրայ գնելու գործը գրեթէ անտեսուած է: Ազգի մը ապագան իր երիտասարդութեան ձեռքն է. երիտասարդութեամբ կիշնայ եւ կամ կ'իլլէ: Ո՛չ մէկ շինարարական ձեռնարկ, ո՛չ մէկ բարեգործական եւ կրթական ձեռնարկ կրնայ շօշափելի արժէք մը ներկայացնել:

Եթէ զանոնք ժառանգելու համար առողջ նկարագրի տէր երիտասարդութիւն մը չի պատրաստենք:

Ազգասիրական այս ստիպողական պահանջը լրացնելու համար է որ այս ընկերութիւնը լուրի բայց լուրջ ջանքեր կը թափէ, նպատակ ունենալով հայ երիտասարդներու ներքին մարդը շինել, բարոյական ամրոցը զօրացնել, եւ նկարագրի շէնքը կերտել:

Ընկերակցութիւնը ունի իր անհրաժեշտ ծախքերը շէնքերու, պաշտօնէութեան, գիրքերու եւ թերթերու համար: Տարեկան նւագագոյն 1200 տօլար պէտք է այդ ծախքը գոցելու համար: Եկամուտի կանոնաւոր աղբիւրներ չկան: Տարին անգամ մը զիմու կը կատարուի օտար եւ հայ համակիր բարեկամներու եւ ուրախ ենք ըսելու թէ անցեալ հինգ տարիներու ընթացքին մեր զիմումները յաջողութեամբ պահուած են եւ Ընկերակցութիւնը կրցած է շարունակել իր օգտակար գործը: Օտար բարեկամներ առատօրէն նւագատած են եւ տարիկան ծախքին երկու երրորդը գոցելու յանձնառու եղած են: Որով մեզի՝ հայերուս կը մնայ գոյացնել առնուազն 400 տօլար, որուն համար կը դիմենք Ձեր բարեկամութեան, խնդրելով որ Ձեր կարելին ընէք այս յոյժ օգտակար գործին շարունակութեան համար:

Նուէրները կրնան զրկուիլ հետեւեալ Հասցէին. — Rev. H. H. Riggs

American Press

Beirut

ԿՆԻՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԻԱԳՐԱԿԱՆ

Արկածախնդիր Ոգի

ՅՕԴՈՒԱՄՆԵՐ

Քրիստ. Միութիւն եւ Հայ Եկեղեցին

Տ. Ղ. ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

Նազուրեղի Կ'անցի ԵՊՍ. Ճ. Ի. ՅՐԻՄԷՆ

Ինքնամիտութեան Պահեր ԹԱՐԳ. Պ. Լ.

Տառակոսի Հայ Աւետ. Եկեղեցիի Պատկերներ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կրօնարարոյական, Դիտական, Կրթական երկշաբաթաթերթ:

Արտօնատէր, Վեր. Կ. Յարութիւնեան Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. Խրլորեան ԲԱՃՆԵԳԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 Մէճիտ

Արտասահման » » 1 Տօլար Հասցէ—

NOR AVEDAPER

B. P. 287

ALEP SYRIE